

1.2. Արտադրություն (ծառայություններ)


1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2006թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ 2193 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 187996.7 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 185520.8 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 13588.3 մլն. դրամի, այլ երկրներում՝ 45135.5 մլն. դրամի արտադրանք:

2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 97.1%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 97.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան
2004թ. դեկտեմբերի նկատմամբ

(%)



Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

(%)

2005թ.	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
հունվար	81.7	100.7	81.7
փետրվար	113.2	110.1	92.5
մարտ	111.6	103.7	103.2
ապրիլ	96.7	96.3	99.8
մայիս	103.2	110.9	103.0
հունիս	106.2	106.4	109.4
հուլիս	102.6	112.7	112.3
օգոստոս	89.2	105.1	100.2
սեպտեմբեր	105.8	105.6	106.0
հոկտեմբեր	103.7	103.8	109.9
նոյեմբեր	101.5	114.3	111.5
դեկտեմբեր	100.0	106.7	111.5

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2006 թ.			
հունվար	73.3	98.7	73.3
փետրվար	113.3	97.9	83.0
մարտ	99.4	87.0	82.5
ապրիլ	111.9	100.5	92.3

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը
ըստ տնտեսական գործունեության տեսակների 2006թ. հունվար-ապրիլի¹

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
Ամբողջ արդյունաբերությունը	187996.7	185520.8	97.1
<i>այդ թվում՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	40193.2	40193.2	93.8
<i>որանից՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	37591.0	37591.0	95.1
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	30382.8	30382.8	91.8
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	7208.2	7208.2	112.5
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	2602.2	2602.2	77.8
հանքագործական արդյունաբերություն	31457.6	32040.8	100.2
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	30450.8	31130.7	99.2
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	1006.8	910.1	141.8
մշակող արդյունաբերություն	116345.9	113286.7	97.4
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	53568.3	50368.8	107.6
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	4991.8	5334.5	115.5
մանածագործական արտադրություն	743.9	606.4	89.5
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	584.7	532.5	99.3
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	98.1	96.1	126.9
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	236.7	257.2	115.5
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	2412.5	2340.2	118.4
քիմիական արդյունաբերություն	3514.3	5038.7	70.1
ռետինե և պլաստմասսայե արտա- դրատեսակների արտադրություն	791.2	1013.0	114.3


¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով ¹ , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ¹ , մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	7084.5	6968.4	123.8
մետաղագործական արդյունաբերություն	32826.9	30036.8	104.4
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	2046.2	2087.9	146.7
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	1438.6	1527.2	78.9
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	2399.8	3596.1	73.4
գործունեության այլ տեսակներ	3608.4	3482.9	111.3



Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների 2006թ. հունվար-ապրիլին





- Մշակող արդյունաբերություն
- Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
- Հանքագործական արդյունաբերություն

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն



- Մետաղե հանքաքարերի արդյունահանում
- Հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ուսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2006թ. հունվար-ապրիլին արտադրված (հաշվառվող) 117 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 73 -ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2005թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում՝ արտադրատեսիլիկական նշանակության արտադրանքի՝ 65 -ից 43 -ի և սպառողական ապրանքների՝ 52 -ից 30 -ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալներ¹

(մլն. դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-ապրիլին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2006	2005 ²	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	66035.6	62838.8	105.1
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	40024.9	38976.9	102.7
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	12788.2	9642.9	132.6
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	13222.5	14219.0	93.0
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ³	3098.5	3274.3	94.6
նշակութակենցաղային և տնտեսական նշանակության	10124.0	10944.7	92.5

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակներ⁴

	2006թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլ	2006թ. հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Միս ⁵ , տոննա	12952.8	11793.8	109.8
Սառնաթերք, ներառյալ երչիկեղեն, տոննա	560.9	416.3	134.7
Պանիր, տոննա	4133.4	4121.4	100.3
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , տոննա	74051.7	66898.2	110.7
Պաղպաղակ, տոննա	278.1	209.7	132.6
Պահածո, տոննա	338.7	892.8	37.9
Ալյուր, տոննա	39152.0	45002.2	87.0
Չավարեղեն, տոննա	223.1	307.4	72.6
Հաց և հացամթերք, հազ. տոննա	98.3	98.3	100.0
Հրուշակեղեն, տոննա	1686.7	1187.7	142.0
Մակարոնեղեն, տոննա	923.6	778.7	118.6
Շաքարավազ, տոննա	-	771.0	-
Բուսական յուղ, տոննա	803.6	70.2	1.1 անգամ
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	3656.3	3653.2	100.1
Կոնյակ, հազ. լիտր	2247.6	2166.5	103.7
Գինի, հազ. լիտր	851.7	751.3	113.4
Շամպայն գինի, հազ. լիտր	91.4	75.9	120.4
Գարեջուր, հազ. լիտր	2283.9	2040.0	112.0
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	8256.1	6789.5	121.6
Բնական հյութեր, հազ. լիտր	1568.5	1212.6	129.4
Հանքային ջրեր, հազ. լիտր	6407.1	6571.7	97.5
Աղ, տոննա	12069.8	10065.7	119.9
Սիգարետներ, մլն. հատ	882.6	795.9	110.9
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	143.5	115.3	124.5

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

² 2005թ սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2006թ. գներով:

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

⁴ Այստեղ և հետագայում բերված տեղեկատվությունը առավել մանրամասն գետնովում է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլ	2006թ. հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	46.4	62.4	74.4
Գորգեր և գորգեղեն, մ ²	8897	9588	92.8
Գուլպեղեն, հազ. զույգ	194.7	74.1	2.6 անգամ
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	1045.3	574.3	182.0
Կարի արտադրանք ¹ , մլն. դրամ	2042.6	2024.1	100.9

2006թ. հունվար-ապրիլին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 20.0%-ով, պլաստմասսայե արտադրատեսակներինը՝ 13.2%-ով, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 1.4%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և լվացող, մաքրող և օսլայող միջոցների արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 49.9 և 36.9%-ով:

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլ	2006թ. հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	12646	5157	2.5 անգամ
Ապրանքային բետոն, մ ³	26275	23607	111.3
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	57220	41958	136.4
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	81715	83924	97.4
Կիր, տոննա	4387	2365	185.5
Ցեմենտ, հազ. տոննա	164.2	124.9	131.5
Գաջ, տոննա	10600	8780	120.7
Ուղիղ կտրվածքի տուֆ, մ ³	10196	8429	121.0
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	43903	22687	193.5
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	18668	11978	155.9

Մետաղագործական արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից 2006թ. հունվար-ապրիլին 2005թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ մոլիբդենի խտանյութի արտադրությունն ավելացել է 38.7%-ով, պղնձի խտանյութում պղնձինը՝ 8.8%-ով, իսկ ցինկի խտանյութի և կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 42.3 և 11.0%-ով:

¹ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2006թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլ	2006թ. հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	5	1	5 անգամ
Ուելե, հատ	105754	102138	103.5
Ուժային ճկուն կաբելներ, կմ	81.3	1.4	58.1 անգամ
Տեղակայման հաղորդալարեր, կմ	221.3	43.6	5.1 անգամ
Էմալապատ լարեր և փաթութալարեր, տոննա	44.4	13.1	3.4 անգամ
Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ	2265	3700	61.2
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	-	923.2	-
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	4097	2126	192.7
Պոմպեր, հատ	141	113	124.8
Համակարգիչներ, հատ	565	792	71.3
Էլեկտրական հաշվիչներ, հատ	9577	310	30.9 անգամ
Փազային ջրատաքացուցիչներ, հատ	299	120	2.5 անգամ
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	51	49	104.1
Ավտոմոբիլային մարտկոցներ, հատ	-	918	-
Ավտոգենային սարքավորումներ, հազ. հատ	28.5	43.1	66.1
Մետաղահատ գործիքներ, հատ	59729	48638	122.8
Ցածրավոլտ էլեկտրական ապարատներ, հատ	26633	20618	129.2
Օպտիկա-մեխանիկական սարքեր և սարքավորումներ, հատ	484	2544	19.0

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվար-ապրիլին հանրապետությունում թողարկվել է 2114.5 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 88.9%-ը: Ընդ որում, ՀԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 14.8% -ով, իսկ ՋԷԿ-երում և ՀԱԷԿ-ում նվազել է, համապատասխանաբար՝ 30.1 և 8.5% -ով:

2006թ. հունվար-ապրիլին ՀԱԷԿ-ը թողարկել է 964.6 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 45.6% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար՝ 579.1 մլն. կվտ ժամ և 27.4%-ը, ՀԷԿ-երը՝ 569.3 մլն. կվտ ժամ և 26.9%-ը, հողմային էլեկտրակայանը՝ 1.5 մլն. կվտ ժամ և 0.1%:

2006թ. հունվար-ապրիլին հանրապետությունում թողարկվել է 143.3 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2005թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 64.8%: